

ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ ՄԻ ԶԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԴԵՐԸ

Գուսան Աշոտի ստեղծագործությունները կարիք ունեն ոչ միայն երաժշտագիտական ու գրականագիտական համակողմանի քննության, այլև լեզվաբանական: Սույն աշխատանքով փորձ է կատարվում անդրադառնալ երգահան-բանաստեղծի աշուղական-գուսանական երգերի, բանաստեղծությունների, չափածո խոսքի լավագույն արտահայտությունների մի մասի լեզվական իրողությունների՝ մասնավորապես հեղինակային նորակազմ բառերի, նոր իմաստների, բառագործածությունների քննությամբ: Բառարանային տվյալների հիման վրա պարզեցինք, որ Գուսան Աշոտի նշյալ ժողովածուներում հանդիպող շուրջ 100 բառեր որևէ բառարանում վկայված չեն: Դրանք կազմությամբ իսկական հողակապավոր բարդություններ են՝ տոհմախաչ, յոթնածավալ, անհողակապ՝ դառնարցունք, արևանուշ, ածանցավոր բառեր՝ վշտաբեկված, խաչարան, տաճարել, բայական և անվանական հարադրություններ՝ խիստ անել, մուսը մնալ, սեր-սրբություն, թել-վարս և այլն: Նորաբանությունների գործածումը բխում է ստեղծագործության բովանդակությունից, տվյալ խոսքային իրավիճակից, քանի որ հենց դրանք վրա է խարսխվում խոսքի հուզականությունը:

Բանալի բառեր՝ նորակազմություն, դիպվածային բառեր, իմաստային նորաբանություն, բառագործածություն, բառակազմություն, բարբառային-խոսակցական:

Որևէ գրողի բառապաշարն ուսումնասիրելիս մեծ նշանակություն ունի նորակազմ բառերի, նոր իմաստների, բառագործածությունների քննությունը: Վերջիններս գնահատվում են որպես հեղինակի ներդրում գրական լեզվի զարգացման մեջ կամ որպես արդյունք՝ գեղարվեստական նպատակներով առաջացած անհատական բառաստեղծման:

Գուսան Աշոտը (Աշոտ Դադայան) դասական գուսանական պոեզիայի նշանավորներից է, ով ստեղծագործելով շուրջ վեց տասնամյակ՝ հայրենի երգարվեստը հարստացրեց մնայուն գործերով: Նրա ստեղծագործությունները կարիք ունեն ոչ միայն երաժշտագիտական ու գրականագիտական համակողմանի քննության, այլև լեզվաբանական: Ուստի՝ սույն աշխատանքով փորձ է կատարվում անդրադառնալ երգահան-բանաստեղծի գուսանական երգերի, բանաստեղծությունների, չափածո խոսքի լավագույն արտահայտությունների մի մասի նորաբանությունների ուսումնասիրմանը: Քննության ենք առել միայն չորս ժողովածու՝ «Հավերժություն», «Սիրո կրակներ», «Ծովաստղիկս» և «Լեռները կանչում են»[*]:

Նորաբանությունների ստեղծումը Գուսան Աշոտի ժողովածուների լեզվում պայմանավորված է ոչ միայն արտահայտչական, տաղաչափական ձևերի դրսևորման գործառույթներով, այլև երգահան-բանաստեղծի աշխարհըմբռնումով, կյանքի երևույթները գեղարվեստականորեն վերարտադրելու անհատական մտածողությամբ: Ս. Մելքոնյանը նշում է. «Եթե կոնկրետ կիրառության

մեջ նոր բառը հանդես է գալիս ոճական-արտահայտչական որոշակի արժեքով, նշանակում է միանգամայն արդարացվում է դրա ստեղծումը, անկախ այն բանից, թե դա հետագայում ընդհանրանալու միտումներ կցուցաբերի, թե ոչ: Նոր բառի ստեղծման ժամանակ գրողի նպատակը ոչ թե գրական լեզուն հարստացնելն է, այլ զգացմունքը, միտքը անհրաժեշտ նրբերանգներով, ոճական պատշաճ որակով արտահայտելը» [1, էջ 174]: Ըստ այդմ էլ՝ հեղինակային նորակազմությունները սկզբում ստեղծվելով խոսքի արտահայտչականության, պատկերավորության նպատակով՝ հետագայում նպաստում են գրական լեզվի բառապաշարի հարստացմանը:

Բառարանային տվյալների հիման վրա պարզեցինք, որ Գուսան Աշոտի նշյալ ժողովածուներում հանդիպող շուրջ 100 բառեր որևէ բառարանում [**] վկայված չեն:

Հեղինակային նորաբանությունները (նեոլոգիզմները) ստեղծվում են լեզվի եղած արմատների, բառերի, ածանցների հիման վրա:

Ժողովածուներում գործածված նոր բառերը կազմումությամբ հիմնականում իսկական հոդակապավոր բարդություններ են, որոնք առանձնանում են իրենց բազմազանությամբ և իմաստային արժեքով: Այսպես՝ «Միտքս է թռչում, վիշտս մրմնջում, **տոհմախաչ** քարին» (Հ, 17), «**Յոթնածավալ** սեր բերեմ, էլի կասեն քիչ է դեռ» (Հ, 83), «Ապրում քո սիրով, քո սուրբ հավատով **անրջապսակ**» (Հ, 133), «**Ակնալույս** են կամարակապ աղբյուրները իմ ոստանի» (Հ, 147), «**Ճոխապատկեր** քո երեկոն ցուքերի մեջ» (ՍԿ, 15), «Խոր աշուն է, **մթնաշունչ**, մուժ է կախվել իմ սրտից» (ԼԿ, 168), «Ծիածանի **գոտկագործ** վեհ ու հպարտ սարերում...մայրս հուշիկ ինձ ուխտեց» (Ծ, 8), «**Ցոլասփյուռ** լճակներ, /Ոսկե համբույր լճակներ» (Ծ, 50), «**Սուրմաթելիկ** սիրունս, սիրոս եմ քամել քո սիրով» (Հ, 95), «Գուսանիս հույս հավատը **մենահատ** է սիրո մեջ» (ԼԿ, 159), ԱՀԲԲ-ում կա *մենահատիկ*՝ «ած. միայն մեկ հատիկ ունեցող, գ. Ցորենի մի տեսակ, միահատիկ» (էջ 996):

Կան նորակազմ բարդություններ, որոնց հիմնականում վերջին բաղադրիչը բարբառային-խոսակցական բառ է. «Անուշիկս ջուր կառնի իր **ոսկեկանթ** կուժն առած» (Հ, 63), ԱՀԲԲ-ում կա՝ *ոսկեկոթ*՝ «ոսկեկերտ՝ ոսկեծույլ կոթ ունեցող» (էջ 1138), «Սիրոս թև է առնում թռչում, աչքը՝ հառած **հավքաթառին**» (Հ, 179), «**Քարեքունջից** ամպն է ելնում արքայական» (Հ, 49) (քունջ՝ անկյուն): Նման երևույթ նկատվում է նաև շաղկապական նորակազմ բարդություններում. «**Շողուշափաղ** է խաղում Որոտանի ցուքերում» (ԼԿ, 86), «Խռովու մի, **խուռուխեթը** լյավ այան չի» (Հ, 69): Ղարաբաղի բարբառի բառարանում վկայված է *խըռըվխեթ*//*խըռըվհաթ*//*խըռավ* բարբառային բառերը՝ **խռովել, խռով մնալ** իմաստներով [2, էջ 281]: Հեղինակային **խուռուխեթ** բառը ևս ունի իմաստային նույն երանգը, սակայն առանձնանում է կազմության ինքնատիպությամբ և երևույթի դիպուկ արտահայտմամբ:

Բնականաբար, միայն մեկ անգամ կամ հազվադեպ գործածված այդ բառերի իմաստները դրսևորվում են նրանց որոշակի կիրառության մեջ: Այսպես՝ **գոյական+գոյական** կաղապարով ստացված **գայլակապ, ողբաղողանջ, եղեգնաձայն** դիպվածային բառերի իմաստը պատկերից դուրս միայն կարող է կռահելի լինել, մինչդեռ պատկերի մեջ դառնում է ըմբռնելի, որովհետև նմա-

նօրինակ որոշիչներով հեղինակն արտահայտում է իր ակնածանքը երգ-բանաստեղծությունների հերոսներ **Պարտիզան Մանուչի, Լարեկացու, սրավորի** հանդեպ. «Քեզ մի լեռ ասեմ, թե՛ սար անսասան, /Քո ցասման ծայրը սրտերին հասավ, /Քաջո քաջերով էն ոհմակներին, /**Գայլակապ** ալիք՝ անտառը վկա» (Հ, 153), «Սիրտը վառեց մոմի պես, լոյսեր սփռեց ծովի պես, /**Ողբադողանջ** երգ երկնեց» (Ծ, 56), «Հե՛յ, սարվորներ, դուք սրտիս մոտ, /**Եղեգնածայն** սեր, առավոտ» (Ծ, 52): Ընդգծված նորակազմությունները, լինելով բառակազմական ինքնատիպ իրողություններ, այնպես են «միահյուսված բանաստեղծական տողին ու պատկերին, որ առաջին հայացքից կարծես արիեստականություն չունեն.... բայց հատուկ ստեղծվել են հենց այդ տեղում դրվելու, այդ պատկերի բովանդակությունն ու հուզականությունն ընդգծելու և առավել արտահայտիչ դարձնելու համար» [3, էջ 26]:

Երգ-բանաստեղծություններում տեղ են գտել նաև անհոդակապ կազմություններ. «**Արևանուշ** շող դառնամ, մնամ հավքի տաղերում» (Հ, 71), «Մրմունջները մնացին, /**Վեհառ** Աստված գթառատ» (Հ, 77), «Սիրահարի **դառնարցունք** ժպիտ ունեմ իմ խորքում» (Հ, 87), «Հու **նաղաշքար** լյավ յար չոնի» (Հ, 113), «Աղբյուրները **տաղասան** /Հորդում լուսեղ անուրջներ» (Հ, 137), «Սրբածորի **թթուշուրը** կաթնաղբյուրը զանգակ-զանգակ.../**Գոհարակունք** ի՛մ աղբյուրներ, /Լուսածաղկուն ի՛մ աղբյուրներ» (Հ, 147), «Մախմուր լանջի գլգլան **խաչաղբյուրն** է հմայում» (Հ, 177), «Ա՛յ **լանջաղբյուր**, մեկ լսիր, /Քո կարկաչով ինձ օգնիր» (Ծ, 13) և այլն: Ընդգծված նորակազմությունները մեծ մասամբ հեղինակի հույզերի և խոհերի պատկերավոր արտահայտման, բանաստեղծական յուրատիպ մտածողության արգասիք են:

Ինչպես քանակական կազմով, այնպես էլ խոսքում ունեցած արտահայտչականությամբ բացառիկ տեղ են զբաղեցնում ածականները: Բնականաբար գեղարվեստական խոսքում ածականները, հատկապես որպես մակդիր գործածելիս, անփոխարինելի միջոց են առարկաներն ու երևույթները ինքնատիպ, թարմ հատկանիշներով ներկայացնելու, խոսքի գեղագիտական արժեքը բարձրացնելու իմաստով. Օր.՝ **սրբամասունք** աղբյուրներ, **արևածարավ** յաթաղան, **ակնատուր** պատկեր, **շենաշեն** երագանք, **նռնաշատ** ձորեր, **արեգնավառ** սիրտ, **հայկահնչուն** գողթան երգեր, **վահագնահուր** սերունդ, **սաղափանախշ** աշխարհ, **նախշարար** սեր և այլն:

Հեղինակային նորակազմությունները հիմնականում ստեղծվում են նմանողության (անալոգիային) սկզբունքով [4, էջ 138]: Երգ-բանաստեղծությունների լեզվում նման սկզբունքը հատկանշվում է և՛ հանգավորումը պահպանելու, և՛ բառապաշարում արդեն իսկ հայտնի բառերի համաբանությամբ ստեղծված նոր բառերի միջոցով ասելիքն առավել ցայտուն արտահատելու դերով: Նման միջոցի ինքնատիպությունը բացահայտվում է միևնույն բանատողում գործածվելիս: Այսպես՝ «Իդ՞ ու փափագ, հավատ ունեմ **սիրահեղեղ**, / Արևները կենաց մաղթեն **լուսահեղեղ**» (Հ, 19), սրանց համաբանությամբ մեկ այլ գործում հանդիպում ենք **երկնահեղեղ** նորակազմությունը. «Ձեր փառքն ասեմ, քաջանց-քաջեր, /**Երկնահեղեղ** կրակ շանթեր» (Հ, 161): Կամ **սիրաբեր, պտղաբեր** բառերի համաբանությամբ **կարոտաբեր, ժպտաբեր** նորակազմությունները. «Վարդ աղբյուրն էլ ցուքերով ծիածանում **ժպտաբեր**, /Քեզ է կանչում

համեմված, յա՛ր, *պտղաբեր* ես այգին» (ԼԿ, 106), «**Կարոտաբեր** իմ նազելին գարնանային շողեր ունի» (ՍԿ, 107): «Ով իմ սիրուն **թխահարս**, սև լի աչեր, **թխավարս**» (ԼԿ, 160): Բարբառային բնույթի մի շարք գործերում հեղինակային նորակազմությունները ծառայում են հակադրության միջոցով տալ պատկերի դիպուկ նկարագրություն, որը բնորոշ է գուսանական երգերին, օր.՝ **Մեղրածոր** բառի նմանությամբ **մթնածոր**-ի գործածումը. «Ա՛յ իմ նախշուն, *Մեղրածոր* եմ ասալ քրեգ...., /Խե՞ յես մըթնալ, **մթնածոր** չեմ ասալ քրեգ» (Հ, 69):

Նորաբանությունների գործածումը բխում է ստեղծագործությունից, տվյալ խոսքային իրավիճակից, քանի որ հենց դրանց վրա է խարսխվում խոսքի հուզականությունը: Ա. Կարապետյանը գրում է. «Բազմալար է գուսան Աշոտի քնարը, լայն են նրա ստեղծագործության ընդգրկման սահմանները. սեր, գարնուն ու բնություն, հայրենիք, մայր, ստեղծարար աշխատանք, կյանքի մասին մարդկային խոհ... Նրա արվեստի բոլոր կողմերը կարելի է ամփոփել մեկ բառ-հասկացության մեջ՝ ՍԵՐ» [5, էջ 17]: Երգ-բանաստեղծություններում հաճախադեպ են միևնույն արմատին զուգորդվող այլևայլ ձևույթները, որոնք կարծես բանալի բառեր լինեն՝ տվյալ ստեղծագործության բուն ասելիքը բացահայտելու նպատակով: Պետք է նշել, որ որոշ ձևույթների (հիմնականում առաջնաբաղադրիչների) բառակազմական ակտիվացում գլխավորապես պայմանավորված է թեմայի բովանդակությամբ: Այսպես՝ **սեր(ա)-, ծաղկ(ա)-, աստղ(ա)-**, արմատները՝ որպես առաջնաբաղադրիչ, բավական հաճախադեպ են՝ **սիրալույս, սիրաթևիկ, սիրահուր, սիրահուշ, սիրաթրթիռ, սիրահեղեղ, ծաղկատարած, ծաղկապար, ծաղկածփուն, աստղաթև, աստղաճառագ:**

Չմրուխտ(ա)-, լեռն(ա)-, հուշ(ա)-, առաջնաբաղադրիչ արմատներով կազմված բարդություններից հանդիպում են երկուական կազմություններ՝ **զմրուխտաթև, զմրուխտավառ, լեռնահոգի, լեռնապարար, հուշապահ, հուշավայր:**

Վերջնաբաղադրիչ արմատներով բարդությունները ևս առանձնանում են ինքնատիպ կազմություններով: Այդպիսիք են՝ **-հեղեղ, -լար, -թև, -սար, -բեր, -կանչ՝ սիրահեղեղ, լուսահեղեղ, երկնահեղեղ, երկնալար, լուսնալար, աստղաթև, սիրաթև, ծովաթև, վանքասար, ուխտասար, սրբասար, ժպտաբեր, կարոտաբեր, ոտնականչ, պանդուխտականչ, հովվականչ** (սա իմաստային նորաբանություն է. բանաստղում գործածված է ժամանակակային իմաստով. «Սրբասարի փերին ինձ սեր շշջաց, /**Հովվականչին** իմ մուրազը վրնջաց» (Հ, 151), ԱՀԲԲ-ում **հովվականչ** բառի ներքո տրված բացատրությունը հետևյալն է՝ «Հովվի կանչը, ոչխարներին հավաքելու ձայն տալը» (էջ 895), իսկ հեղինակը շեշտում է այն ժամանակը, երբ իր մուրազը ձայն է տալիս):

Հանդիպում են նաև նոր բառեր, որոնք կազմվել են ոչ միայն հիմնական ձևույթներով (արմատ), այլև երկրորդական բառակազմական ձևույթներով (ածանց): Նման նորակազմությունները թեև քանակային առումով զիջում են, բայց եղածներն էլ առանձնանում են իմաստային խորությամբ, քանի որ կարևորը բարեհունչ և դիպուկ, հաջող և ճիշտ բառերի կազմումն է. «Այստեղ ամեն ինչ կախված է ճաշակից, այսպես ասած՝ լեզվագագաղղությունից, այսինքն տվյալ լեզվի բառակազմության ներքին օրենքներն ու դրանց զարգացման հակումները ճիշտ ըմբռնելու և գործադրելու կարողությունից և, որ ամենակարևորն է, հասարակական պահանջից» [6, էջ 88]: Եղած օրինակները փաստում

են, որ հաճախադեպ են վերջածանցավոր նորակազմությունները (սրանցից գործածությամբ առավել են հատկապես ածականակերտ ածանցներով կազմությունները), ինչպես՝ **սիրավորիկ, լուսածաղկուն, ծաղկածփուն, վշտաբեկված, ծաղկատարած, ողբանք, խաչարան** և այլն: Բայական ածանցներով կազմվածներն ընդգծում են աստիքի հուզականությունը. օր.՝ **քանքարել, տաճարել, ծործորել**. «Նա **քանքարեց, տաճարեց**, Արևի պես ճառագեց, /Չցանածը նա ցանեց» (Ծ, 56), «Երգեր-երգեր սրտեր մտնում, **ծործորում**, /Վիշտը վանում որդեկորույս մայրերի» (Հ, 171): Նախածանցավոր ձևերից հանդիպել ենք մեկ օրինակ՝ **ամենաճար**-ը. «Ով չի սիրել՝ ի՞նչ կիմանա սերն ինչ է, /Սիրո կյանքի **ամենաճար** բուժիչն է» (ՍԿ, 88):

Ժողովրդական շունչն ու մտածողությունը գուսանական երգ-բանաստեղծություններում շեշտվում են վերլուծական կազմությունների առատ օգտագործմամբ: Սրանցից հանդիպում են բայական ու անվանական հարադրություններ:

Բարբառային-խոսակցական լեզվին բնորոշ ամփոփականությունն ու պարզությունը երկերում արտահայտվում են բայական հարադրությունների տեղին օգտագործմամբ: Հեղինակը **այգի գցել, շափաղ տալ** հարադրավոր բայերի համաբանությամբ ստեղծել է **այգի անել, շափաղ առնել** հարադրությունները. «Ծառ եմ տնկել, **այգի արել**, անծրև ուզել կենարար» (Հ, 23), «Աշկ ենք այացալ, **շափաղ առալ** էս ծյորան» (Հ, 69): Հաճախ դիմում է մեկ այլ հնարի. նոր հարադրություններ է ստեղծում այն դեպքում, երբ գրական լեզվում եղած համադրական ձևերը չունեն տվյալ միտքն արտահայտելու համապատասխան իմաստային խորություն: Այսպես՝ հեղինակային **խինդ առնել, խինդ անել, մուևջ մնալ** նորակազմությունների համադրական ձևերը գրական լեզվում թերևս **խնդալ, ուրախանալ, լռել** բառերն են, որոնք բանաստեղծներում ունեն **հարբել, տանջել, սպասել** փոխաբերական գործածությունները. «Ելեմ մառանը մտնեմ, փրփուր գինուց **խինդ առնեմ**» (Հ, 25), «Գիշերը երկար **խինդ արեց** մրմո՛ւնջ-մրմո՛ւնջ» (Հ, 29), «Գուսան, նախշո ո՞ւր գնաց, աչքդ ճամփին **մուևջ մնաց**» (Հ, 175): Երբեմն հանդիպում են անհասկանալի կազմություններ, որոնց բաղադրիչների միացումն ու իմաստային գործածումը ոչ մի կերպ չի պատճառաբանվում, օր.՝ «Արտույտն արտերում **փարվազ է անում**, /Հայրենի կանչով տուն եկեք, ախպերք» (թևերը բացած, տարածած, փխբ.՝ գրկաբաց) (Հ, 101): Բառը մեկ անգամ էլ հանդիպում է Ալ. Շիրվանզադեի ստեղծագործության մեջ նույն իմաստով. «Հենց որ նրա աչքն ընկնի աչքիդ, հենց որ դու առաջվա պես նրա երեսին մի ուրախ ծիծաղեցիր, իմացիր, որ վարդի պես կբացվի ու ծտի պես **փերվազ** կանի: Երեք օր է, ինքը հենց քեզ վրա է խոսում, քեզ է ցանկանում տեսնել» [7, էջ 365]: Բառը **փերվազ** ձևով անհայտ է հայերենին, բառարաններում նույնպես վկայված չէ: Կարծում ենք, որ խոսքը պարսկերենում առկա և պարսկերենից թուրքերենին անցած **پرواز /pervaz/** բառն է՝ «թևերը բացել, թռչել, թևերը բաց վազել» և այլ նշանակություններով: Թե հեղինակները ինչ պայմաններում են բառը բերել հայերեն, հայտնի չէ, բայց պատկերավորության համար բավականին դիպուկ է հարադրական կազմությամբ գործածումը: Հանդիպում են նաև դարձվածային արժեքով հետևյալ նորակազմությունները. «Ըրազիս վեր փախչում ես, **ալակ-սալակ եմ տյառնում....** /Հու վեր յարից հե-

ռանա՝ **դիդիմ-դիդիմ կոյառնա**» (Հ, 121): **Սալակ||սալակնը||սալա** բառը գործածական է Սյունիք-Արցախ բարբառային տարածքում՝ «ցախից կամ ցաքից գործված դուռ այգու համար»: **Սալակ** են անվանում նաև ուռենու ճյուղից լայն բերանով կողովին: **Սալ** բառով և **-ակ** ածանցով նշված տարածքի բարբառներում գործածվում է գետաքարը: Գրաբարում վկայված է **սալա** կամ **սալայ**, որ նշվում է որպես բարբառային բառ՝ «կողով, քթոց, սապատ» իմաստներով. «Չայս սալայս ես զուգեմ: Սալա և քթոց ես զուգեմ» [8, էջ 683]: Միջին հայերենում նույնպես վկայված է բառը՝ «զամբյուղ» իմաստով [9, էջ 101]: Արցախում զուգահեռաբար գործուն են **սալակ||սալակնը**: Հայերենին, թուրքերենին **սալա** բառը անցել է արաբերենից՝ **سَالَا /sālā/**՝ «հացը մեջը դնելու կողով»: Սա արաբերենի՝ թուրքերենի կամ պարսկերենի միջնորդությամբ անցած բառերից է, քանի որ գործուն է մինչև 12-13-րդ դարերը: Կարծում ենք՝ բարդությունը կրկնավոր դրսևորում ունի հեղինակի միջամտությամբ, որովհետև ժողովրդական խոսքում «հաճախ նախադաս կրկնորդի սկզբի բաղաձայնն ընկնում է» [10, էջ 270] ոչ միայն փոխառյալ բառերում՝ **ափալ-թափալ**, այլև մյուս բառերում՝ **առոց-փառոց, ակաս-պակաս, ալար-դալար** և այլն: Ըստ էության՝ Գորիսի խոսվածքով գրված երկերում հանդիպող դրածվածային արժեքով **ալակ-սալակ դառնալ, դիդիմ-դիդիմ դառնալ** կազմությունները գործածված են **խիստ անհանգստանալ** և **տառապել, տանջվել** իմաստներով:

Անվանական հարադրություններից հանդիպում են հիմնականում հարակցական բնույթի նորակազմությունները՝ կազմված խոսքային հոմանշության հիմունքով: Նման կազմություններ հիմնականում գործածվում են սիրուհուն, յարին բնութագրող բանաստղերում. «Յարս երկու խաչարան, /**Սեր-սրբությունս** ծորում» (Հ, 125), «Գուսան Աշոտ, քո սերը ծով, սիրող՝ նավակ, **սուրբ-սիրավոր**» (Հ, 183), «Ամռան տոթ է, զով հովեր, սիրուս **թել-վարսին** փարվեք» (Հ, 37), «Սրբերն էլ թող Ակներ գան՝ **սեր-աստվածս** ճանաչեն» (Հ, 71): Նշյալ կազմություններից որոշներն էլ բնութագրում են բնության երևույթներ. «Զամուն, թխպին, **թոռ-թացին**, չալղունին էլ խաշ տվիր» (Հ, 125), «Հոգիս դրախտ են տանում **զանգ-զրնգուն** լեռները» (Հ, 21):

Հայտնի է, որ հեղինակային նորակազմությունները երբեմն որակվում են իբրև դիպվածային բառեր, այսինքն՝ այնպիսի բառեր, որոնք տվյալ բնագրում երևան են գալիս առավելապես խոսքային դիպվածի բերումով, և շատ քիչ դեպքում է, որ դրանք կարող են դառնալ ընդհանուր գործածության բառեր: Նման բնորոշումը թերևս ճիշտ է միայն այն դեպքում, երբ տվյալ բառն ունի ընդամենը մեկանգամյա, ընդ որում բավական նեղ գործածություն: Իսկ երբ այն տվյալ բնագրում, առավել ևս առհասարակ նույն հեղինակի մյուս ստեղծագործություններում նույնպես ունենում է մի քանի կամ բազմակի գործածություն, այդ դեպքում հազիվ թե հնարավոր լինի նորակազմությունը դիտել դիպվածային:

Տվյալ դեպքում գործ ունենք այնպիսի բառերի հետ, որոնք Գուսան Աշոտի տարբեր ժողովածուներում հանդիպում են առնվազն երկու և ավելի անգամ, ուստի հեղինակային խոսքին բնորոշ գործածություններ են, և ըստ այդմ դրանք մեծ մասամբ ոչ դիպվածային (օկագիոնալ) բառեր են, այլ «հեղինակային-անհատական ոճի դրսևորման բառային միջոցներ, ունեն բանաստեղծական լեզվի որոշակի առանձնահատկություններ, առհասարակ ծառայում են գեղարվեստական խոսքի ինքնատիպությանը» [11, էջ 256]:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԿ-Լեռները կանչում են
Ծ-Ծովաստղիկս
Հ-Հավերժություն
ՍԿ-Սիրո Կրակներ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [**] **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, 1642 էջ:
- [*] **Գուսան Աշոտ**, Լեռները կանչում են, Բանաստեղծություններ, «Սովետական գրող» հրատ., Ե., 1988, 184 էջ:
- [*] **Գուսան Աշոտ**, Ծովաստղիկս, Երգեր առանց նվագակցության, «Սովետական գրող» հրատ., Ե., 1982, 259 էջ:
- [*] **Գուսան Աշոտ**, Հավերժություն, «Գրաբեր» հրատ., Ե., 2010, 191 էջ:
- [*] **Գուսան Աշոտ**, Սիրո կրակներ, «Հայաստան» հրատ., Ե., 1971, 131 էջ:
- [4] **Եզեկյան Լ.**, Ոճագիտություն, ԵՊՀ հրատ., Ե., 2003, 376 էջ:
- [**] **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի» հրատ., Ե., 2002, էջ 492:
- [3] **Թամարյան Զ.**, Հ. Շիրազի նորաբանությունների ոճական առանձնահատկությունները, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2010, N3, էջ 26-33:
- [**] **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, Ե., 1968-1980, հհ. 1-4:
- [5] **Կարապետյան Ա.**, Գուսան Աշոտի բանաստեղծական աշխարհը, «Տաթևի համալսարանի» հրատ., Գորիս, 1995, 111 էջ:
- [10] **Կարապետյան Ա.**, Վերլուծական կրկնավոր բարդությունները ժամանակակից հայերենում, ՊԲՀ, Ե., 2005, թ. 2, 263-276 էջ:
- [11] **Համբարձումյան Վ.**, Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորաբանությունները, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2011, 1-2, էջ 248-256:
- [**] **Մալխասյանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, Պետհրատ, Ե., 1944-1945:
- [9] **Մարգարյան Ալ.**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, 408 էջ:
- [1] **Մելքոնյան Ս.**, Ավանարկներ հայոց լեզվի ոճաբանության, «Լույս» հրատ., Ե., 1984, 284 էջ:
- [**] **Մեյրիխանյան Փ.**, Նոր բառերի բացատրական բառարան, «Փյունիկ» հրատ., Ե., 1996, 208 էջ:
- [8] **Նոր բառգիրք հայկազեան լեզուի**, Վենետիկ, 1837, 683 էջ:
- [7] **Շիրվանզադե Ալ.**, Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1950, հ. 1, 365 էջ:
- [6] **Պապոյան Ա.**, Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1970, 158 էջ:
- [2] **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Արցախի պետական համալսարան, Ե., 2013, 846 էջ:

NEOLOGISMS AND THEIR STYLISTIC ROLE IN SOME OF GUSAN ASHOT'S WORKS
- **INGA MARGARYAN** - Gusan Ashot's works need not only a thorough musical and literature examination, but also a linguistic one. In this work an attempt has been made to study the linguistic features of the best expressions, particularly the new coinages, word usage in songwriter-poet's ashugh-gusan songs and poetic language. Considering different word

examples, we have found out that about 100 words from Gusan Ashot's above mentioned works are not included in any dictionary. Structurally they are real complex words, e.g. տոհմախաչ, յոթնածափալ / 'tohmatsar, 'jotnatsaval/, դառնարցունք, արևանուշ /darnartsujunq, 'arevanush/, derivatives, e.g. վշտաբեկված, խաչարան, տածարել, /vshtabek'vats, khacha'ran, tatja'rel/, verb and noun collocations, e.g. խիկն անել, մունջ մնալ, սեր-սրբություն, թել-վարս /'khind 'anel, 'munj 'mnal, 'ser-'srbutjun, 'tel-'vars/ etc. The need to use these neologisms comes from the speech situation, as the expressiveness of language is based on them.

Key words: neologism, situational words, semantic neologisms, word usage, word building, dialectal.

НЕОЛОГИЗМЫ В РЯДЕ СБОРНИКОВ ГУСАНА АШОТА И ИХ СТИЛИСТИЧЕСКАЯ РОЛЬ - ИНГА МАРГАРЯН - Произведения гусана Ашота нуждаются не только в музыковедческом и литературоведческом всестороннем изучении, но и в лингвистическом.

В данной работе проделана попытка обратившись к ацугским песням, стихом, наилучшим выражения, языковым реалиям песенника-поэта, в частности к авторским неологизмам, новой семантике, проанализировать употребленную лексику.

В результате изучения данных словарей выяснилось, что около 100 слов встречающихся в сборниках гусана в словарях не значатся. По составу это сложные слова с соединительной гласной: տոհմախաչ, յոթնածափալ, без соединительной гласной: դառնարցունք, արևանուշ, производные слова: վշտաբեկված, խաչարան, տածարել, глагольные и именные сочетания: խիկն անել, մունջ մնալ, սեր-սրբություն, թել-վարս и др.

Употребление неологизмов вытекает из содержания произведения, отдельной речевой ситуации, так как именно на этом зиждется эмоциональность речи.

Ключевое слова: неологизм, ситуативные слова, семантические неологизмы, использование слов, словообразование, диалектика.